# ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ՀԵՐՔՈՒՄ

Եթե ձեր բիզնեսի տարածքը բաց է հանրության համար, ապա շենքային հարմարությունները պետք է մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Այս չափորոշիչների վերաբերյալ սխալ պատկերացումները կարող են ձեզ կասկածներ ներշնչել ձեր հիմնարկի համապատասխանության հարցում: Եկեք պարզաբանենք իրականությունը.

**1990 թվականի ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՄԵՐԻԿԱՑԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԸ (ADA)** iքաղաքացիական իրավունքների մասին դաշնային օրենք է, որն արգելում է խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ և պահանջում է, որ բոլոր հանրային ու առևտրային շենքային հարմարությունները մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար:

**ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԿՈԴԵՔՍԸ** բովանդակում է շինարարությանն առնչվող մատչելիության դրույթները, որոնք պահանջներին համապատասխանող շինարարության չափորոշիչներն են: Որևէ շինության համապատասխանությունը հիմնված է շինարարության կամ փոփոխության պահին գործող Կալիֆորնիայի Շինարարական կոդեքսի տարբերակի վրա:

| Առասպել | Փաստ |
|---|---|
| Իմ բիզնեսը պարտավոր չէ համապատասխան ել պահանջներին, քանի որ շենքը հին է: | **«Պատասխանատվությունից պաշտպանող» դրույթներ չկան:**<br>«Պատասխանատվությունից պաշտպանող» ասելով նկատի ունենք այն պատկերացումը, թե «Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին» օրենքի պահանջները չեն տարածվում օրենքի ընդունումից առաջ կառուցված շենքերի վրա: Սակայն դա ճիշտ չէ: Անկախ շենքի տարիքից կամ պատմական նշանակությունից, եթե դա բաց է հանրության համար, ապա դուք պետք է ապահովեք ձեր առաջարկած ապրանքների և ծառայությունների մատչելիությունը:<br>Մատչելիության հավաստագրված մասնագետը (CASp) կարող է ձեզ հայտնել, թե ինչ փոփոխություններ են անհրաժեշտ, եթե այդպիսիք անհրաժեշտ են, որպեսզի ձեր հիմնարկը համապատասխանի պահանջներին: |
| Շենքը պատկանում է ուրիշին, ուստի ես պատասխանատու չեմ խախտումների համար: | **Համապատասխանությունը միայն տանտիրոջ պատասխանատվությունը չէ:**<br>Ե՛վ վարձատուն, և՛ վարձակալը պատասխանատու են հիմնարկի հանրային տարածքների մատչելիության համար: Եթե դուք վարձակալում կամ վարձով եք տալիս որևէ տարածք, խորհուրդ է տրվում պայմանագիր կնքել տանտիրոջ հետ այն մասին, թե ով է պատասխանատու շենքային հարմարությունների մատչելիության ապահովման և սպասարկման համար:<br>Վարձակալության պայմանագրերը պետք է սահմանեն, թե գույքը ստուգվե՞լ է արդյոք Մատչելիության հավաստագրված մասնագետի (CASp) կողմից, և եթե այո, գույքը համապատասխանո՞ւմ է շինարարությանն առնչվող մատչելիության բոլոր կիրառելի չափանիշներին: |
| Չափորոշիչներն անընդհատ փոխվում են, ինչը դժվարացնում է համապատասխանության պահպանումը: | **Ձեր հիմնարկի շինարարական չափորոշիչները չեն փոխվում:**<br>«Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքը ավելի քան քսան տարվա ընթացքում թարմացվել է միայն մեկ անգամ: Թեև Կալիֆոռնիայի Շինարարական կոդեքսը պարբերաբար փոփոխվում է, սակայն ձեր հիմնարկի շենքային հարմարությունների համապատասխանությունը որոշվում է համաձայն այն շինարարական կոդեքսի, որը գործում էր տվյալ շինության սկզբնական կառուցման կամ վերջին փոփոխության ժամանակ: Ժամանակին պահանջներին համապատասխանող շինությունը չի համարվում չհամապատասխանող այն պատճառով, որ մատչելիության կանոնակարգերն ու ուղեցույցները թարմացվում են, բայց մատչելիության առանձնահատկությունները պետք է պահպանվեն:<br>Մատչելիության հավաստագրված մասնագետը կարող է որոշել ձեր հիմնարկի համապատասխանության կարգավիճակը համաձայն կիրառելի չափորոշիչների (ADA և Կալիֆորնիայի շինարարական կոդեքս): |

Լրացուցիչ տեղեկությունների և ձեր տարածքում մատչելիության հավաստագրված մասնագետ գտնելու համար այցելեք https://www.dgs.ca.gov/DSA/Resources/CASp-Property-Inspection:

DSA
DIVISION OF THE STATE ARCHITECT